

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՍՏԱԲԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԱՄՍԱՐՅԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ ԽՈՒՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

26.11.2019 23:01



ք.երևան
26.11.2019թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը (**այսուհետ՝ Հանձնաժողով**) հետևելով 2019 թվականի նոյեմբերի 25-ին Հովհաննես Չամսարյանի փաստաբանական գրասենյակում ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի կողմից նախաձեռնված խուզարկություն իրականացնելուն ուղղված քննչական գործողության ընթացքին, պարզել է հետևյալը.

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի ավագ քննիչ Օ.Առաքելյանը նկատի ունենալով, որ փաստաբան Հովհաննես Չամսարյանը փաստաբանական ծառայություններ է մատուցել ընկերությանը, հետևապես փաստաբանի կողմից շահագործվող համակարգիչներում կարող են առկա լինել իր վարույթում քննվող քրեական գործով հետաքրքրություն ներկայացնող տվյալներ, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին միջնորդել է թույլատրել կատարելու խուզարկություն:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 21.11.2019թ. որոշմամբ բավարարվել է ավագ քննիչ Օ.Առաքելյանի միջնորդությունը և, վերջինիս թույլատրվել է խուզարկություն կատարել Երևան քաղաքի Նալբանդյան 5 հասցեում գտնվող Հովհաննես Չամսարյանի աշխատասենյակում՝ ենթադրյալ կեղծիք կատարելու հանգամանքը պարզելու նպատակով:

Քննիչը, ներկայանալով Երևան քաղաքի Նալբանդյան 5 հասցեում գտնվող երկու աշխատասենյակ ունեցող փաստաբանական կազմակերպության գրասենյակ, խուզարկել է աշխատասենյակները և կապարակնքել է երկու համակարգիչները և հայտարարել դրանք առգրավելու մասին:

Այսուհետև, ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչների, այլ փաստաբանների, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի

գրասենյակի ներկայացուցիչների իրավական համապատասխան պարզաբանումների արդյունքում քննիչը համակարգիչները վերադարձրել է փաստաբան Հովհաննես Չամսարյանին, սակայն պահանջել է թույլատրել զննել դրանց պարունակությունը տեղում, որի դեմ փաստաբան Հովհաննես Չամսարյանն առարկել է:

Նշվածի կապակցությամբ Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ.

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝

- Արգելվում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցների) միջամտությունը փաստաբանական գործունեությանը **(2-րդ մաս)**.

- Փաստաբանի բնակարանը, տրանսպորտային միջոցը կամ գրասենյակը, ինչպես նաև փաստաբանական կազմակերպության գրասենյակը չեն կարող խուզարկվել փաստաբանական գործունեության հետ առնչվող հանգամանքները պարզելու կապակցությամբ: Չի թույլատրվում փաստաբանին խուզարկել իր մասնագիտական պարտականություններն անմիջականորեն կատարելիս **(6-րդ մաս)**.

- Փաստաբանի մոտ կամ փաստաբանական կազմակերպության գրասենյակում գտնվող իրավաբանական օգնությանը վերաբերող փաստաթղթերը և տեղեկատվական կրիչները (համակարգիչները, տեսաձայնագրող սարքերը, լազերային սկավառակները, տեսաժապավենները և այլն) անձեռնմխելի են, չեն կարող առգրավվել (վերցվել) և չեն կարող որպես ապացույց օգտագործվել **(7-րդ մաս)**:

Նշված նորմերը կոչված են երաշխավորելու փաստաբանների անկախությունը, ինչպես նաև վստահորդների հետ ցանկացած հարաբերությունների ու խորհրդատվությունների գաղտնի բնույթը՝ իրենց մասնագիտական պարտականությունները կատարելիս:

Օրենքի պաշտպանության ներքո են գտնվում նաև

փաստաբանի բնակարանը, տրանսպորտային միջոցը, ինչպես նաև փաստաբանական գրասենյակը, իսկ փաստաբանի մոտ կամ փաստաբանական գրասենյակում գտնվող իրավաբանական օգնությանը վերաբերող փաստաթղթերը և կրիչներն անձեռնմխելի են:

Փաստաբանական գաղտնիքի պաշտպանությունը երաշխավորվում է ոչ միայն ներպետական օրենսդրությամբ, այլև միջազգային պայմանագրերով, որոնք կազմում են մեր իրավական համակարգի բաղկացուցիչ մասը:

1990թ. սեպտեմբերի 7-ին ՄԱԿ-ի հանցավորության կանխարգելման եւ իրավախախտների հետ վարվելու ուղեորով Կոնգրեսի ընդունած **«Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներում»** տեղ գտած 22-րդ կետի համաձայն.

Կառավարությունները ընդունում և ապահովում են իրավաբանների և նրանց հաճախորդների ցանկացած հարաբերությունների ու խորհրդատվությունների գաղտնի բնույթը՝ նրանց մասնագիտական առնչությունների շրջանակներում:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2000 թվականի հոկտեմբերի 25-ի **«Իրավաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին»** թիվ 21

հանձնարարականում սահմանվել են մի շարք հիմնարար ընդհանուր դրույթներ: Այդ թվում այն, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները, որպեսզի փաստաբանները կարողանան իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնել առանց խտրականության և առանց խոչընդոտների, ինչպես հանրության, այնպես էլ իշխանությունների կողմից:

Բազմաթիվ գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշում է կայացրել փաստաբանի գրասենյակում կամ տանը իրականացվող խուզարկությունների և առգրավումների (տե՛ս Նեմեցը, Ռոեմեն և Շմիդտս)

ընդդեմ Լյուքսեմբուրգի, 51772/99, ՄԻԵԴ 2003 IV, Սալլինենն և այլոք ընդդեմ Ֆինլանդիայի, թիվ 50882/99, 27 սեպտեմբերի 2005թ, տե՛ս վերը՝ Անդրե, և Խավիեր Դա Սիլվիերա), իրավաբանի և իր հաճախորդի միջև նամակագրության գաղտնիության խախտման (տե՛ս Շոնենբերգեր և Դուրմազն ընդդեմ Շվեյցարիայի, 20 հունիսի 1988, Սերիա Ա թիվ 137), իրավաբանի հեռախոսը գաղտնալսելու (տե՛ս Կոփի) և իրավաբանական ընկերությունում խուզարկության և էլեկտրոնային տեղեկատվության առգրավման (տե՛ս վերը՝ Սալլինենն և այլոք և Վեստեր և Բիկոս Բետեյլիգոնզեն ԳմբՀ) համապատասխանությունը Կոնվենցիայի այս դրույթին: **Այդ կապակցությամբ դատարանը նշել է, որ 8-րդ հոդվածի ուժով իրավաբանի և իր հաճախորդի միջև նամակագրությունը, անկախ դրա նպատակից (խիստ մասնագիտական նամակագրությունը ներառյալ՝ Տե՛ս վերը՝ Նեմեց, կետ 32), ունի արտոնյալ կարգավիճակ, երբ հարցը վերաբերում է գաղտնիությանը** (տե՛ս Քամփբելն ընդդեմ Միացյալ Թագավորության, 25 մարտի 1992թ, կետեր 46-48, Սերիա Ա թիվ 233, և նաև, ի թիվս այլ ադյուդերների, Էքինջին և Աքալընն ընդդեմ Թուրքիայի թիվ 77097/01, 30 հունվարի 2007թ, կետ 47, ինչպես նշվել է ավելի վաղ, սա կիրառվում է իրավաբանների և իրենց հաճախորդների միջև բոլոր ձևի գրագրությունների նկատմամբ): Դատարանը նաև նշել է, որ դա «առանձնահատուկ կշիռ է հաղորդում» իրավաբանի մասնագիտական գաղտնիության նկատմամբ ոտնձգության վտանգին, «**քանի որ դա կարող է հետևանքներ ունենալ արդարադատության պատշաճ իրականացման վրա**» (տե՛ս վերը՝ Վեստեր և Բիկոս, կետեր 65 և 66, տե՛ս վերը՝ Նեմեց, կետ 37, և Անդրե կետ 41) և **մասնագիտական գաղտնիությունը հիմքն է իրավաբանի և հաճախորդի միջև վստահելի հարաբերությունների** (տե՛ս վերը՝ Անդրե, կետ 41, և Խավիեր Դա Սիլվիերա, կետ 36): Արդյունքում, քանի որ 8-րդ հոդվածը պաշտպանում է անհատների միջև բոլոր տեսակի «**նամակագրության**» գաղտնիությունը, **այն ավելի ուժեղ պաշտպանություն է տրամադրում իրավաբանների և իրենց հաճախորդների միջև գրագրությանը: Սա արդարացված է այն փաստով, որ իրավաբանները հիմնարար դեր ունեն ժողովրդավարական հասարակությունում, այն է՝ դատավարության կողմերին պաշտպանելը:** Բացի այդ իրավաբանները չեն կարող իրականացնել այս կարևորագույն առաջադրանքը, եթե չկարողանան երաշխավորել իրենց պաշտպանյալներին, որ իրենց միջև տեղեկատվության փոխանակությունը կմնա

գաղտնի: Դա վստահության վրա հիմնված հարաբերությունն է նրանց միջև, որը էական է այդ առաքելության իրականացման համար, և որ վտանգի է ենթարկված: Անուղղակիորեն, բայց անխուսափելի կախված է դրանից բոլորի՝ արդար դատաքննության իրավունքը, ներառյալ մեղադրյալների՝ իրենք իրենց չմեղսագրելու իրավունքը: Այս լրացուցիչ պաշտպանությունը, որ շնորհում է 8-րդ հոդվածը իրավաբան-հաճախորդ հարաբերությունների գաղտնիությանը, և որի վրա այն հիմնված է, Դատարանի մոտ համոզմունք է ծնում, որ այս տեսանկյունից, իրավական մասնագիտական գաղտնիքը պահելու արտոնությունը առանձնահատուկ կերպով պաշտպանված է այդ հոդվածով:

Համադրելով 25.11.2019թ. ԱԱԾ քննիչի կողմից փաստաբանի գրասենյակի խուզարկման և համակարգիչների առգրավման փորձի ժամանակ առկա փաստերը վերոհիշյալ նորմերի հետ, Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը՝

- ԱԱԾ-ում քննվող քրեական գործը հարուցվել է **միջին ժանրության** հանցագործության ենթադրյալ կատարման հատկանիշներով.
- ԱԱԾ քննիչը դատարանի որոշման մեջ նշված փաստաբանի աշխատասենյակում խուզարկություն կատարելու թույլտվության հիման վրա փաստացի խուզարկել է փաստաբանական կազմակերպության երկու աշխատասենյակ, որոնցից մեկը փաստաբան Հովհաննես Չամսարյանի աշխատասենյակը չէ.
- Երկու տարբեր աշխատասենյակներից, որոնցից մեկի վերաբերյալ քննիչը չի ունեցել դատարանի թույլտվությունը, վերցվել են երկու համակարգիչներ և փաթեթավորվել են.
- Փաստաբան Հովհաննես Չամսարյանը ԱԱԾ կողմից իրականացվող քրեական գործով ունեցել է վկայի կարգավիճակ.
- Փաստաբան Հովհաննես Չամսարյանի առնչությունը ԱԱԾ կողմից իրականացվող քրեական գործով սուբյեկտի հետ առաջացել է Հովհաննես Չամսարյանի կողմից փաստաբանական գործունեություն իրականացնելու փաստից.
- ԱԱԾ քննիչն իրավասու չէր փաստաբան Հովհաննես Չամսարյանի գրասենյակում խուզարկություն կատարել և համակարգիչ

առգրավելու փորձ կատարել:

Այս պայմաններում, Հանձնաժողովը պնդում է, որ փաստաբան Հովհաննես Չամսարյանի փաստաբանական գրասենյակում գտնվող համակարգիչն ամբողջությամբ գտնվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով երաշխավորված պաշտպանության ներքո:

Հանձնաժողովը հիշեցնում է, որ **միջին ծանրության** հանցագործության բացահայտման հանրային շահը այս պայմաններում չի կարող գերակայել փաստաբանի՝ փաստաբանական գաղտնիքը պահպանելու հանրային շահի նկատմամբ: Հակառակ դեպքում, կվտանգվի փաստաբանական գործունեության իրականացումը իրավական պետություն համարվող Հայաստանի Հանրապետությունում, քանի որ նախաքննության մարմինը միշտ էլ կարող է այդ պատրվակով տիրանալ փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկություններ:

Վկայակոչված միջազգային և ներպետական իրավակարգավորման, ինչպես նաև ձևավորված միջազգային դատական պրակտիկայի պայմաններում ակնհայտ է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից փաստաբանի գրասենյակը խուզարկելու և, նրա վստահորդի իրավաբանական օգնությանը վերաբերող փաստաթղթերը և կրիչներն առգրավելու փորձի գործողություններն իրավաչափ համարվել չեն կարող, ավելին, երբ նույն կրիչներն օգտագործվելով համակարգիչներում՝ կարող են նաև պարունակել փաստաբանի այլ վստահորդներին վերաբերող փաստաբանական գաղտնիք հանդիսացող տեղեկություններին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի գործունեության» Կարգի 2.13 և 2.14 կետերով, Հանձնաժողովը՝

- հայտարարում է, որ՝ **«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված արգելքին հակառակ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի ավագ քննիչ Օ.Առաքելյանի կողմից փաստաբան Հովհաննես Չամսարյանի**

**փաստաբանական գրասենյակի
խուզարկությունը և համակարգիչների
առգրավման փորձը միջամտություն է
փաստաբանական գործունեությանը և
հակասում է «Փաստաբանության մասին» ՀՀ
օրենքի 21-րդ հոդվածի 2-դ, 6-րդ և 7-րդ մասերի
պահանջներին:**

- դատապարտում է **ՀՀ Ազգային
անվտանգության ծառայության քննչական
դեպարտամենտի ավագ քննիչ Օ.Առաքելյանի`
փաստաբանական գործունեությանը
միջամտող, այդ թվում` փաստաբանական
գաղտնիքը խախտող գործողությունները:**

- հորդորում է **ՀՀ պետական մարմիններին ու
պաշտոնատար անձանց զերծ մնալ
փաստաբանական գործունեությանը որևէ կերպ
ապօրինի միջամտելուց:**

Հանձնաժողով

Համակարգող` Գևորգ Մկրտչյան

Անդամներ`

Արմինե Ֆանյան

Արսեն Մկրտչյան

Լիանա Բալյան

Արմեն Ֆերոյան

Դիանա Շախրամանյան

Էմին Բեգլարյան

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&  
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```